

ՀԱՆԳԻՍՏ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ

(1880—1965)



Վերջերս Բաքվում վախճանվեց արժանապատիվ Տ. Գրիգոր քահանա Սարգսյանը։

Հանգուցյալը ծնվել էր 1880 թվականին Լեռնային Ղարաբաղի մարզի Մարտունու շրջանի Մամնա գյուղում, հողագործի ընտանիքում։ Իր նախնական կրթությունն ստացել է Սարուշէն գյուղի Այվազյանի անվան դպրոցում, ապա, Շուշու թեմական դպրոցն ավարտելուց հետո, էջմիածնում, Սահակ արքեպիսկոպոս Այվազյանի ձեռամբ, 1916 թվականի սեպտեմբերի 16-ին, ձեռնադրվել է քահանա, վերանվանվելով Տ. Գրիգոր։

Հանգուցյալը քահանայագործել է մարդաշատ Թաղավարդ, Սարգսաշեն գյուղերում և Գրոզնի, Կիզլար, Ս. Խաչ, Կիրովաբադ և Բաքու քաղաքներում։

1956 թվականին, քառասնամյա անխոնջ քահանայագործության համար, Վեհափառ Հայրապետի կողմից պարգևատրվել է քահանայական լանջախաչով։

Հանգուցյալն իր բարեխիղճ աշխատանքով ու բնավորությամբ հարգված ու սիրված էր իր ժողովրդի կողմից։

Հանգուցյալի աճյունն ամփոփվեց իր ծննդավայր Մամնա գյուղում, տոհմային գերեզմանատանը։

Հանգի՜ստ նրա ոսկորներին և խաղաղությո՜ւն հոգուն։